

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ  
ԱՄԲՈՂՋԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ 2009-2010 թթ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ  
THE MAIN RESULTS OF THE HOUSEHOLD INTEGRATED LIVING CONDITIONS  
SURVEY FOR 2009 -2010**

Հետազոտության իրականացման համար կատարվել է պատահական հավանականությամբ, ըստ մարզերի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք:

Հետազոտությունն իրականացվել է հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում: Տնային տնտեսությունների (SS) ընտրությունը կատարվել է ամսական պարբերականությամբ՝ ռոտացիոն եղանակով: Հետազոտությունն իրականացվել է ողջ տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարի ուսումնասիրելով 7872-ական SS: Հետազոտության արդյունքները տարածվել են գլխավոր համակցության նկատմամբ (կշռվել են) և ներկայացուցչական են մարզային կտրվածքով:

Հետազոտության հիմքում դրված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և դրանց հաշվարկման հիմքում ընկած մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և (կամ) Եվրամիության վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) կողմից առաջարկվող սահմանումներին ու դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով համադրելիությունը միջազգային համանման ցուցանիշների հետ:

Սույն դիտարկման իրականացման մեթոդաբանությունից ելնելով, հարկ է նկատի ունենալ, որ աշխատանքային ռեսուրսների թվաքանակը նույնական է 15-75 տարեկան առկա բնակչության<sup>1</sup> թվաքանակի հետ, այսինքն ներառված չեն 15-75 տարեկան ժամանակավորապես բացակա (մինչև 1 տարի) բնակչությունը:

A random two stage stratified sample by regions (marzes) has been designed to conduct the survey.


The survey has been conducted in all urban and rural settlements of the republic. The selection of households (HH) has been done monthly by the rotation principle. The survey has been carried out during the whole year by surveying of 7872 HH every year. The survey results were extrapolated to the general population (weighted) and are representative at the marze level.

The concepts, set of indicators and methodology of calculation underlying the survey basically comply with the definitions and concepts recommended by the ILO and (or) Eurostat, while taking into account the peculiarities of their application in Armenia to the extent possible, at the same time, by providing the comparability with the international similar indicators.

The number of labour resources is the similar to the de facto<sup>1</sup> population of 15-75 year-old, i.e. the temporally absent (till 1 year) de jure population of 15-75 year-old is not included.

<sup>1</sup> Մշտապես և ժամանակավոր (սույն դիտարկման շրջանակում՝ ավելի քան 3 ամիս) ներկա անձանց հանրագումարն է:  
*The sum of permanently and temporally (more than 3 months within the given observation) present population.*

Հետազոտության հիմնական հիմնադրույթն (կոնցեպցիան) ըստ ԱՄԿ և (կամ)  
Եվրոստատի մեթոդաբանության<sup>1</sup>  
BASIC CONCEPT OF THE SURVEY ACCORDING TO ILO AND (OR) EUROSTAT METHODOLOGY<sup>1</sup>



<sup>1</sup> ԱՄԿ և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներում առանձին դեպքերում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինծառայողներն ըստ ԱՄԿ մեթոդաբանության դասվում են զբաղվածների (տե՛ս ILO, ISCO-88), իսկ ըստ Եվրոստատի (տե՛ս European Commission, The European Union labour force survey, Methods and definitions-2001)՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին: Տվյալ դեպքում ՀՀ ԱՎԾ-ն հիմք է ընդունել վերջինս:

*In some cases, there are certain differences in the definitions by ILO and Eurostat. Specifically, according to the ILO methodology (see ILO, ISCO-88), conscripts on mandatory military service are classified into the group of employed, while they are classified into the group of economically inactive population according to Eurostat methodology (see European Commission, the European Union labour force survey, Methods and definitions-2001). In this case, the RA NSS based itself on the latter.*